

تَنْجِيمًا

مجلة جمعية القاهرة الخيرية الأزمنية العامة

ՏԵՉԵԿԱՏՈՒ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒՄԻՆ ԳԼՏԻՈՒԷՒ Հ.Բ.ԸՄԻՈՒԹԵԱՆ

المدير المسئول ا. صاروخان - ١٥ شارع عماد الدين - تليفون ٥٥٦٣٦ - صندوق بريد ٧١٧ القاهرة

Զ . Տ Ա Ր Ի

— Թ Ի Ի 4 - 5 —

ԱՊՐԻԼ - ՄԱՅԻՍ 1962

Խմբագրական

ՀԱՒԱՏԱՐԻՄ ԻՐ ԿՈՉՈՒՄԻՆ
(Հ.Բ.ԸՄ.Ը՝ Ս. ՄԱՇՈՏՅԻ 1600) ԱՄԵԱԿԻՆ
ԵՒ ԱԶԳԱՀԱՒԱՔԻՆ ՀԱՆԳԷՊ)

Մայր Աթոռ Ս. Էջմիածնեն ետ՝ Հայկական Պետության Գերագույն Խորհուրդն ալ հրամանագրեց, որ Հայոց Այբուբենի կերտիչ եւ Հայ ոգեկան ու մտակութային Անկախութեան, այսինքն՝ իսկական եւ անխորտակելի Անկախութեան հիմնադիր Սուրբ Մեսրոպ Մատենոցի ծննդեան 1600 ամեակը ամենուրեք տօնուի մեծ տո՛ւով եւ արժանավայել պատօճանութեամբ:

Անցեալ տարուոյ վերջերէն սկսեալ՝ բոլոր գաղութներուն մէջ, մտակութային կեդրոններ տօնեցին այս մեծ դարադարձը: Իսկ երեւան, Հայկական Հանրապետութեան բոլոր մտաւորականներուն ու աշխատանքային կերպարաններէն կայացուցիչներուն հետ՝ գաղութներէն ալ բազմաթիւ հիւրեր հուտեցով, Մայիսի կեսերուն, մեծ ցոյցերով եւ հանդեսներով փառաւորեց հաննարեղ Տարոնցիին անունն ու գործը:

Հ.Բ.Ը. Միութիւնը, չտարող դար ամբողջ՝ միայն պատերազմէն, ջարդէն եւ տեղահանութենէն հարուածուած հայ մնացորդացի վերականգնումովը զբաղելի ետ, հաւատարիմ՝ իր կոչումին, իր դեմքը դարձուց

դեպի մտակոյթը, ու իր նիզերը կեդրոնացնել առաջադրեց՝ Օսկանի Սուրբին հիմնադրած յաւերժական Անկախութեան պատօճանութեան ու զարգացման աշխատանքին վրայ:

Հայութիւնը, մանաւանդ հայրենի պատմական հրամայականներու մթնոլորտէն ու առօրեայ հայեցի կեանքի բարիքներէն հեռու, յասկապէս Ափիւոնի մէջ, դատարարուած էր մտաւոր, բարոյական եւ ֆիզիկական կորստեան, եթէ չ'ապրէր եւ չսնանէր իր մտակոյթով: Այս նմանութեան կանուխէն գիտակցած. Հ. Բ. Ը. Միութեան վարիչներն ու բոլոր գործիչները, ծրարեցին եւ գործադրել ալ սկսան. որ հայ կրթութիւնը լաւագոյնս կազմակերպուի գաղութներուն մէջ:

Արդ, անվարան կարելի է րսել, որ մեր պանծալի Միութիւնը Ս. Մեսրոպի, Ս. Սահակի եւ Վռամատայուն արժայի սկսած ու հիմնած գործը տարուանակեց եւ կր տարուանակ ամենայն հաւատարմութեամբ: Հայ մտակոյթի եւ հայ կրթութեան իր ծառայութեամբ, Հ.Բ.Ը. Միութիւնը հանդիսացաւ նաեւ հայութեան մէջ միասնականութեան դրօշակիր եւ ազգակ: Իր գաղափարականներուն եւ գործերուն տուրջ՝ մենք բոլորուած տեսնեմք անէն գոյնի եւ դաւանանքի հայերը, իբրևու միացած:

Այս առաքելութեան ճամբուն մէջ՝ կարիքներ հեղհեղ տեսցան: Բայց մեր Միութիւնը երբեք ալ տուարումի չ'մասնուեցաւ դիմագրաւելու համար անող դժուարութիւնները: Ուովհետեւ, այնքան մեծցաւ ժողոպ

վուրդին վստահութիւնը հանգեայ մեր կազմակերպութեան, որ նուիրատուութիւններն ու կտակները յորդեցան եւ կը յորդին:

Աւ քանի շատցան Միութեան միջոցները, այնքան նոր դռներ բացուեցան մեակութային եւ կրթական մարզին մէջ: Միութեան անձնուէր Նասսագանը՝ Ալեք Մանուկեան, Ապրիլ 15 ի իր կոչով՝ կը հրաւիրէր Միութեան բոլոր գործակները, որ նոր աղբիւրներ ստեղծուին, բազմացող նոր կարիքները դիմաւորելու համար: Հայ մեակոյթնք՝ հրատարակուած եւ հրատարակելի գիրքերով ու մեակութային կեդրոններով, հայ կրթութիւնը բացուած եւ բացուելիք դպրոցներով եւ ուսուցչանոցներով, իրենց ամենամեծ պատշապաններէն մէկն է որ գտնուէր յանձին Հ.Բ.Ը. Միութեան:

Եւ ասիկա՝ Ս. Մեսրոպի մեծագոյն անանդին հանդէպ ցոյց տրուած լաւագոյն հաւատարմութիւնն էր:

Մեակոյթի եւ դաստիարակութեան յաւիտենական աշխատանքն զատ, այս օրերուն, հայեցի իշխանութեանց եւ զաղութահայ ազգային օրհասակներուն, յասկապէս Հ.Բ.Ը. Մ.ի առջեւ կը դրուի հրատարակուած հարց: Տասնըրորս տարի ետք՝ կրկին կ'առաջադրուի Հայրենագործ: Ինչպէս յայտարարեցին Մեականի պատշոճական օրհասակները, այս տարի իսկ ներգաղթ պիտի կազմակերպուի, նախ Խանէն, Կիպրոսէն եւ Ա.Մ.Ը.էն, եւ միւս տարիներուն ալ այլ գաղութներէ:

Առաջին ներգաղթի հապանեպ կարգադրութիւնները չկան այս անգամ. ներգաղթողները պիտի ունենան իրենց բնակարանը, գործը եւ յարակից յարմարութիւնները: Անոնց զաւակները շուտով պիտի կարենան վարժարան յանձնել. ու բնականոն կեանքը պիտի տարուանակուի:

Իրողութիւն է սակայն, որ կարգ մը գաղութներ՝ այլեւս չունին իրենց հին փայլը, եւ անոնց ազգային իշխանութիւնները՝ չունին նախկին միջոցները, օժանդակելու ներգաղթի ձեռնարկներուն: Ծարժումին ներթափանցումը կը հոգայ հաւկական պետութիւնը. սակայն, բարոյական եւ կազմակերպական մասին մէջ՝ Հ.Բ.Ը. Միութիւնը — ինչպէս միտք — այս անգամ եւս իր փորձառու ինն ու հեղինակութիւնը ներգաղթին ի սպաս պիտի դնէ:

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՒՆ Ի ՊԱՏԻՒ Պ. ՅԱԿՈՒ ՄԱՐՏԻՆԵԱՆԻ

Ներկայտանայ գաղութի սիրուած և յարգուած ազգայիններէն մին է Պ. Յակոբ Մարտինեան, որուն ի պատիւ Հ.Բ.Ը. Միութեան ներկայտասի կեդրոնական Յանձնաժողովը ընդունելութիւն մը կազմակերպած էր Միութեան Հ. Մ. Ը. Մ. նուազար մտղադաշտին մէջ, Կիրակի 8 Ապրիլի երեկոյեան:

Պ. Մարտինեան, այս գաղութի հին սերունդի արժանաւոր ներկայացուցիչներէն մին է: Ան ունեցած է ազգային բեղուն գործունէութիւն: Տարիներով եղած է Բաղաշահան Ժողովոյ անդամ՝ վարելով գանձապահի պատասխանատու պաշտօնը: Մաս կազմած է Ազգային Իշխանութեան հովանաւորութեան տակ կազմուած յանձնախումբերու և իր օժանդակութիւնը չէ զլացած իրեն դիմողներուն: Եղած է «Կեսարիոյ և Նրջակայից Հայրենակցական Միութեան» հիմնադիրներէն մին, որուն վարչութեան ալ մաս կազմած է՝ ստանձնելով գանձապահի պաշտօնը: Հոգիով փարած է այս աշխատանքին մինչեւ իսկ արամադրելով իր գրասենեակը, վարչական ժողովներու և խորհրդակցութեանց համար. Նաեւ գլխաւոր նախաձեռնողներէն մին եղած է «Պատմութիւն Հայ Կեսարիոյ» երկնատար ստուարածաւալ գործին հրատարակութեան (հեղինակութիւն Ար. Ալպոյանեանի, ապ. Գոհրէ, 1937, 2480 էջ):

Սակայն իր արտին ամենէն մօտիկը եղած է Հ. Բ. Ը. Միութիւնը, որուն անդամակցած է 1906էն, այսինքն Միութեան հիմնադրութենէն ի վեր: 1931 ին հոչակուած է վեթերան Անդամ, իսկ 1956 ին:

Մեր Միութեան վարիչ մարմիններն ու բոլոր գործօն անդամները, ինչպէս միասնական եւ կազմակերպուած աշխատանք կը տանին մեակոյթի եւ կրթութեան մարզին մէջ, նայնպէս իրենց առաւելագոյն պիտի բնծայեն Ազգահաւաքումի այս նուիրական գործին: Պարտինք ապացուցանել, անգամ մը եւս, որ գիտակից ենք եւ հաւատարիմ մեր կոչումին:



Առաջնորդական Փոխանորդ Արժ. Տ. Սահակ Գահանայ Եաքարեան Տիար Մարտինեանի կը յանձնէ Հ.Բ.Ը. Միութեան Պատուոյ Անդամի վկայականը: Աջից՝ Տիկնայր Վ. Մարտինեան եւ Ա. Քէհեան: Զախից՝ Տիկին Ս. Եազուպեան:

Միութեան Կիճնադրութեան 50 ամեակին՝ ստացած է Յիսնամեայ Երեւանի Անդամի տիտղոսը եւ այժմ, Միութեան իր մատուցած ծառայութեան ցփոխարէն կ'արժանանայ Պատուոյ Անդամի տիտղոսին: Պ. Մարտինեան մի քանի տարիներ եղած է Միութեան Գահիրէի Մասնաժողովի Վարչութեան անդամ, իսկ 1937էն մինչեւ 1961, անընդմիջաբար մաս կազմած է Եգիպտոսի Կեդրոնական Եանձնաժողովին, սանձնելով գանձապետի պաշտօնը:

Միութեան Կեդրոնը, գնահատելով Պ. Մարտինեանի անձնուէր գործունէութիւնը Հ. Բ. Ը. Մ. եան մեծ բնտանիքէն ներս, Նախագահ Պ. Ալեք. Մանուկեանի ստորագրութեամբ վկայագրով մը, զինք կը հռչակէր Պատուոյ Անդամ:

Սարքուած ընդունելութիւնը կը տրուէր այս առիթով: Ներկայ էին Հ. Բ. Ը. Մ. ի Գահիրէի մէջ գործող վարչութիւններու եւ յանձնախումբերու անդամներն ու անձնակազմը, իրենց ընտանեկան պարագաներով:

Բացման խօսքը ըրաւ Պ. Վարդգէս Գարաշեան, որ ներկաներուն ծանօթացուց Պ. Մարտինեանի կեանքը եւ ազգային

գործունէութիւնը, վեր առնելով անոր անշահախնդիր ոգին, նուիրումը եւ ազգին օգտակար ըլլալու բարի տրամադրութիւնը:

Եւջորդաբար խօսք առին Գահիրէի Հ. Բ. Ը. Միութեան ատենապետ Պ. Հայկազ Քիւրքեան եւ Կանրածանօթ արուեստագէտ եւ Միութեան Գահիրէի պաշտօնաթերթ «Տեղեկատու»ի արտօնատէր Պ. Ալ. Սարուխան:

Պ. Հայկազ Քիւրքեան իր եւ իր պաշտօնակիցներուն անունով յոբսեարը շնորհաւորելէ ետք յիշեց նաեւ Տիկին Մարտինեանը, որ տարիներ շարունակ իր գործակցութիւնը բերած է իր ամուսնոյն ազգանուէր ձեռնարկներուն: Պ. Քիւրքեան, իր խօսքը վերջացնելէ առաջ Վարչութեան կողմէ յիշատակի մէտայլներ նուիրեց Տէր եւ Տիկին Մարտինեաններուն:

Պ. Ա. Սարուխան, իրեն իւրայատուկ գուարթ ոճով վեր առաւ Պ. Մարտինեանի գործունէութիւնը Հ.Բ.Ը. Միութեան ներս յիշելով անոր նուիրումի ոգին ազգային գործերու եւ յատկապէս Հ.Բ.Ը Մ. եան Կանգէպ, թելադրելով, որ ներկաներուն բարի

ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆԻ ԿԵԱՆՔՆ ՈՒ ԳՈՐԾԸ

Ֆրանսա, Փարիզ.—

Փարիզի Մասնաժողովին կից գործող Երիտասարդաց ակումբին անդրանիկ դասախօսութիւնը տեղի ունեցաւ անցնող Յունուար ամսուան ընթացքին Ռահմանին՝ անուան սրահին մէջ: Դասախօսն էր տաղանդաւոր ճարտարագէտ տիար Եդ. Իւթիւճեան. իսկ նիւթը՝ Երուսաղէմ: Սրահը շատ նեղ կուգար հոծ թիւով ներկաներուն, որոնք պատասխանած էին եղած հրաւերին: Երկայ էին կաթողիկոսական Պատուիրակ Սերովբէ Եպ. Մանուկեան, Պր. Հայկ Թոփաքեան՝ Եւրոպայի Կեդր. Յանձնաժողովէն, Տիկին Պետրոսեան, եայլն:

Երիտասարդացի Ատենապետ Տիար Հաթեան ներկայացուց օրուան դասախօսը, թուելով անոր բազմապիսի արժանիքները, Ս. Էջմիածնայ տաճարին վերակառուցման աշխատանքներուն իր բերած մասնակցութիւնը, ինչպէս և Երուսաղէմի սուրբ Յարութեան Տաճարին վերանորոգման պատասխանատու գործին սպասարկող երեք ճարտարապետներէն մին, միւսները ըլլալով Ճրանսացի մը և յոյն մը: Մեծանուն ճարտարապետը խօսեցաւ Լիբանանի մէջ ի կատարած շրջագայութեանց, յետոյ, հրէարկան և վերջապէս Արարական բաժիններու մէջ՝ գտնուող սրբավայրերու մասին՝ ցուցադրելով գունաւոր նկարներու հիւնալիօրէն ճշտեցուած մթերքը, որոնց կ'ընկե-

օրինակ ըլլայ Պ. Մարտինեանի անձը:

Պ. Մարտինեանի շնորհակալական արտայայտութենէն յետոյ խօսք աւաւ Առաջնորդական Փոխանորդ Տ. Սահակ Աւագ Բհնյ. Շաքարեան, որ իր յարգանքի խօսքը ընելէ ետք՝ յօրելեարին յանձնեց Պատուոյ Անդամի վկայագիրը ու փակեց այս ընդունելութիւնը, յօրելեարին մաղթելով առողջութիւն և երկար կեանք:

Գործադրուեցաւ նաև զեղարուեստական պատշաճ յայտագիր մը:

Փահիրէ Գ.Պ.

րանար պարոն բանախօսին մանրամասն բացատրութիւնները և մանաւանդ Իրաւունքի մասին տիրող ըմբռնումներու և տարուած պայքարներու շուրջ հաճելի մանրավէպեր որոնք դարերէ ի վեր կը մղուին յարատեւօրէն:

Այս շահեկան հաւաքոյթը վերջ գտաւ ներկաներու ջերմ և խանդավառ ծափերուն մէջ:

— Փարիզի Սաբրե-Բեռն Մայր Տաճարի շրջափակին մէջ կազմակերպուեցաւ Արեւելեան ձէտերու յատուկ առժամայ ցուցահանդէս մը, որուն իր մասնակցութիւնը բերաւ Նուպար Մատենադարանը և Հայկական Թանգարանը, որոնք տրամադրեցին իրենց գանձերուն և արուեստի առարկաներուն կարեւոր մէկ մասը: Յուշահանդէսին բացումը կատարուած է 24 Յունուարին, Եկեղեցիներու Միութեան մասին բանախօսութեամբ մը՝ զոր կատարած է քարոզիչ Հայր Տանիէլու Է. Բ. Ը. Միութիւնը և Հայկական Թանգարանը կը ներկայացնէր Տիար Նուրհան Սրէնկեան: Յուշահանդէսը տեւեց մինչեւ Մարտ ամսուան վերջը:

Մարի Նուպար Հիւնաբեկութիւն.—

Փարիզի համալսարանական հայկական տան — Մարի Նուպար Հիւնաբեկութիւն — 40 հայ ուսանողները Յունուար 19 ին հաւաքուած էին լսելու Եւրոպայի Կեդր. Յանձնաժողովի փոխ-ատենապետ Պր. Հայկ Թոփաքեանի զեկոյցը՝ Հայկական Տան վարչական և մտակարարական հարցերուն մասին: Պր. Թոփաքեան իր զեկոյցին մէջ չեղտեց որ Հայկական Տան սենեակներուն 90 տո հարիւրը վերապահուած է հայ ուսանողներու, պայմանաւ որ անոնք ամէն տարի Յունիսին վերջը Է. Բ. Ը. Միութեան Եւրոպայի Կեդր. Պրահանեակին յանձնին լման թղթածրար մը, կազմուած համալսարանական ուստանի Ճրանսական կանոնագրութեան պահանջած բոլոր վաւերաթուղթերէ: Կեդր. Յանձնաժողովի անդամներէն փոքր. Արփիարեան և Տոքթ. Անդրանիկեան իրենց կարգին խօսեցան ուսումնական որակին և Փարիզի Համալսարանի կողմէ իբր բարձրագոյն դպրոցներ ճանչցուած հաստատութիւններու մասին: Այս պիտի դպրոցներտ

մէջ կանոնաւոր ուսում առած ուսանողներն են որ կրնան Հայկական Տան մէջ բնակութեան խնդրազիր ներկայացնել: Ուսանողներուն կողմէ եղած զանազան հարցումներուն օրուայ հիւրերը սիրով պատասխանելէ վերջ հաւաքոյթը ցրուեցաւ:

— Փարիզի Մասնաժողովի օտեկան պարահանդէսը տեղի ունեցաւ ժորժ Է. պանդոկի շքեղադոյն սրահներուն մէջ, անցեալ Փետրուար 18 ին՝ ներկայութեամբ աննախընթաց և ընտիր բազմութեան մը, որուն մէջ աչքսոռ էր երկսեռ հայ երիտասարդութիւնը: Պարահանդէսին կազմակերպութեան և յաջողութեան սատարեցին Տիկնանց Մասնախումբը և Երիտասարդաց Միութիւնը, իրենց ժրջան անդամուհիներով և անդամներով: Պարահանդէսին փայլը աւելցուցին Սոսէ պարախումբը Տիկնի Յասմիկ Բիւթներեանի առաջնորդութեամբ և ընկերակցութեամբ Տէտէճեան նուագախումբին և երգչուհի Ռոզի Արմէնի:

— Փարիզի Սալ օր Եիվի սրահին մէջ, Մարտ 11 ին տեղի ունեցաւ Դպրոցասէր Տիկնանց վարժարանին Գեղարուեստական ցերեկոյթը, նախագահութեամբ Գերապատիւ Սերովբէ Եպիս. Մանուկեանի: Այս առթիւ ներկայացուեցան աշակերտուհիներու կողմէ Ծրանսերէն ներկայացում մը «Էջը և Առուակը» (Ա. տը Միւսէ) և հայերէն ներկայացում մը «Համբերութեան Յաղթանակը»: Նախագահ Սրբազանը հանդէսի փակման իր հեղինակաւոր խօսքին մէջ ծանրացաւ Եւրոպայի մէջ գտնուող հայ ազգկանց յատուկ այս միակ հայկական դպրոցի կարեւորութեան մասին և ուրախութեամբ աւետեց որ ՊելՖորաբնակ ազգային մը՝ պր. Եղիանեան 5 Միլիոն հին ֆրանքի գումար մը արամադրած է վարժարանի ընդարձակման ծրագիրը ի կատար ածելու համար:

Մարտի 11.—

Հ. Բ. Ը. Միութեան Մարտի 11ի Հայուհեաց մասնախումբին տարեկան պարահանդէսը տեղի ունեցաւ անցեալ Դեկտեմբեր 18ին Սփլանտիտ Օթէլի սրահներուն մէջ:

աննախընթաց փայլով՝ ի ներկայութեան հոծ և ընտրեալ բազմութեան մը:

Հանդէսին յաջողութիւնը, որ գերազանցեց ամէն ակնկալութիւն, կը պարտինք կազմակերպիչ Տիկնաներուն և Միութեան նուիրեալ անդամներուն և բարեկամներուն: Այս հանդէսի ընթացքին, ներշնչուելով Հայուհեաց Մասնախումբի հիմնական նպատակներէն, որոնցմէ մէկն է քաջայերբ մեր համալսարանական և մտաւորական սերունդը, հրապարակային գնահատանքի և պատիւներու առարկայ եղան զաղութիւն մէջ բարձր ուսմանց և մասնագիտութեանց հետեւող 47 երկսեռ Հայ ուսանողները, որոնց անունները ծանուցուեցան և անոնց յաջողութիւնները գնահատանքով յիշատակուեցան:

Է՛ս ան Փրովանս.—

Հ. Բ. Ը. Միութեան Էջոսի մասնաճիւղին հովանաւորութեամբ տեղի ունեցաւ հանդէս մը Մանուկեան Օրուան առթիւ, Յունվար 14ին՝ տեղւոյն «Միսթրալ» գեղեցիկ սրահին մէջ: Օրուան բանախօսն էր Միութեանս Մարտի 11ի մասնաճիւղի ատենապետ Տիար Վահագն Սահաթճեան: Ճոխ յայտագրին մաս կը կազմէին արտասանութիւններ, Մոլիէրէն երկու ներկայացում՝ «Արաքս» պարախումբը՝ նուագախումբով, իր մասնակցութիւնը բերաւ օրուան հանդիսութեան: Հաւաքոյթին պատեյ նախագահ դատաւոր Տիար Վ. Փորթուգալեան, ինչպէս և օրուան բանախօսը՝ Տիար Սահաթճեան խօսեցան՝ ժողովուրդին բացատրելով Բարեգործականի կարեւորութիւնը և դերը մեր կեանքէն ներս. հրաւիրելով բոլոր Հայերը որ անխտիր բոլորուին այս կենսունակ կազմակերպութեան շուրջ: Հանդէսին յաջողեցին Հայկական Պարերը՝ ստեղծելով մեծ խանդավառութիւն:

Նիս.—

Փետր. 20 ին, կաթողիկոսական Պատուիրակ Գեր. Սերովբէ Եպիս. Մանուկեան Մարտի 11էն յստկապէս Նիս ժամանած էր Հայրապետական շքանշանի յանձնումը կատարելու համար միութեանս պատուակալ պատուիրակ Տիար Վահան Մալեղեանի: Սրբազանին կ'ընկերանային Տէր Ատոմ

Քանան, Նիսի հոգեւոր հովիւը և Քէշիշու-
եան վարդապետ, որ Ս. Էջմիածինէն նոր
վերադարձած, հետը բերած էր թանկագին
նուէրը: Մանուկեան Սրբազան, ժամը Յին,
նախագահեց Մալէզեաններու յարկին տակ
սարքուած ընտանեկան գողտրիկ հաւաքոյ-
թին: Քէշիշեան Վարդապետ կարգաց Ն.Ս.
Օծուծիւն Վազգէն Ա. Վեհափառին սրբա-
տառ Կոնդակը: Սրբազան նախագահը գեղե-
ցիկ ճառով մը 90ամեայ Վահան Մալէզեանի
բազմաբեղուն կեանքի գրուատիքը ընելով՝
անոր կտործքին վրայ գետեղեց նուիրական
չքանչանը: Ներկաները քերմապէս շնորհա-
ւորեցին շքանշանակիր յոբելիտարը, մինչ
Տիկին Մալէզեան ճոխ պիւլֆէսով մը կը մե-
ծարէր ներկայ հիւրերը:

Ամերիկա. —

Ամերիկահայ ծանօթ մանկավարժ Փրոֆ.
Գէորգ Ա. Սարաֆեան շարաւային Գալի-
ֆորնիոյ Համալսարանի (Եռ, Սի. Իլ, Էյ —
Հոս Անճեւոս) հայ լեզուի և մշակոյթի
պատմութեան դասախօս նշանակուած է:
Փրոֆ. Սարաֆեան բացի մանկավարժական
իշխանութէն, գրած է հետեւեալ հատորները. —
Հիսթորի ավ Էնիւ Բէյքըն ին Արմիթա, 1930ին,
և երկհատոր Անթիպի Պասմուքիւնը՝ 1953ին:

Յրեզնօ. — Արանց մասնաճիւղի և Տիկ-
նանց Օժանդակի տարեկան մեծ հանդէս
ճաշկերոյթը տեղի ունեցաւ Դեկտեմբեր 9ի
Շարաթ իրիկունը, Հայ Ամերիկեան Քա-
ղաքացիներու սրահին՝ մէջ, խումն բազ-
մութեան մը մասնակցութեամբ: Օրուան
ատենապետն ու գլխաւոր խօսողն էր Պր.
Վահէ Հայկ, որ իր բացման խօսքերուն հետ
— համառօտակի տուաւ նաեւ Բարեգործա-
կանին կատարած ազգային և մշակութային,
կարեւոր գործերը: Տեղի ունեցան մեներգ,
արտասանութիւն, և Հայաստանի նկար-
ներու ցուցադրութիւն:

Պրոնքս. — Պրոնքսի Հ.Բ.Ը. Միութեան
Մասնաճիւղին և Դուրեան Վարժարանի
միացեալ ճաշկերոյթ հանդէսը տեղի ունե-
ցաւ Դեկտեմբեր 16ին Ս. Սալ Հայաստանեայց
Եկեցեցիին մէջ, որ լեցուած էր 300 հո-
գինոց բազմութեամբ մը: Դուրեան վար-

ժարանի խնամակալուհի Տիկին Զապէլ
Գալֆեան տեղեկութիւններ տուաւ Դուր-
եան դպրոցի մասին, ուր կը յաճախեն
կանոնաորապէս 26 աշակերտներ: Պր. Տէր-
պպեան հայերէն և անգլերէն լեզուով
խօսեցաւ Բարեգործականի 50 տարուան
գործունէութեան շուրջ: Ուսուցիչական խոր-
հուրդի Ատենապետ Տիկին Վերժին Էքսէր-
ճեան շեշտեց հայ դպրոցներու կարեւորու-
թիւնը և մայրերու պարտականութիւն-
ները, Հոգեշնորհ Հմայակ Վրդ. Ինդոյեան
թելադրեց մեր մայրենի լեզուին գործա-
ծութիւնը տուներէն ներս: Ուսուցչուհի
Տիկին Ռոզ Սալատուրեանի առաջնորդու-
թեամբ աշակերտները երգեցին ու արտա-
սանեցին Պր. Միհրան Քիւլֆէլեանի դեկա-
ւարութեամբ ներկայացուեցաւ Սելուսուլի
զաւեշտը: Գովելի էր ամերիկահայ երիտա-
սարգներուն կարճ ժամանակի մէջ հայերէն
լեզուով դեր կատարելը: Ծաշկերոյթին հա-
սոյթը յատկացուեցաւ Դուրեան Վարժա-
րանին:

— Հ. Բ. Ը. Միութեան ճաշկերոյթ —
դասախօսական ժողովը տեղի ունեցաւ Մի-
ութեան սեփական տան մէջ, Ուոթըրթա-
ւըն: Կրթական Յանձնախումբի ատենապետ
Տրքթ. Թաշճեան պաշաճօրէն ներկայացուց
օրուան դասախօս Պր. Շահան Նաթալին, որ
վերջերս Հայաստան այցելեց: Պր. Շահանի
նիւթն էր՝ «Բրականութիւնը Հայաստանի
մէջ»: Յիշատակեց Հայաստանի տաղանդաւոր
բանաստեղծներէն Նաիրի Զարեանը, Յովհան-
նէս Շիրազը, Սողոմոն Տարօնցին, Աշոտ
Գրաշին, և Պարոյր Սեւակը, որուն Անլուի
Ջանգալատուն քերթողագիրքէն կարգաց
հատուած մը, որ Կոմիտասի բեղմնաւոր
կեանքին փառաբանանքն էր, ինչպէս նաեւ
արտաճիւղի նկարագրութիւնը Ապր/լիան
Եղեռնին: Ազգային ոգիին վերադարձումն
իբրեւ ապացոյց յիշեց Գրիգոր Զոհրապի
ծննդեան հարիւրամեակի մեծ շուքով կա-
տարուած տօնակատարութիւնը, որուն ինքն
ալ ներկայ գտնուած էր: Այս ժամ ու կէս
տեւող դասախօսութեան ընթացքին հանդի-
սականները ուշադրութեամբ և հետաքրք-
րութեամբ հետեւեցան Պր. Շահանի խօսքին
և Հայաստանի բանաստեղծներուն նուա-
ճութեանը:

— Փրակիցնս.— Արանց մասնաճիւղը և Տիկնանց Օժանդակը Նոյմբեր 3ին երեկոյեան սարքեցին տարեկան ճաշկերոյթ հանդէս մը, Սր. Սահակ-Մետրոպ եկեղեցւոյ նորակառուց Եկաւեան սրահին մէջ, որուն ներկայ եղաւ 200է աւելի բազմութիւն մը: Զոհարակին հասոյթը պիտի յատկացուի Պէյրուէի մէջ Հ. Բ. Ը. Միութեան հովանաւորութիւնը վայելող հայ նախարթարաններու: Հայաստանէն նոր եկած ձայնապնակներու անոյշ հնչիւններուն տակ ճաշ աւելի հաճելի կը դառնար: Բարեգործականի երեկոյեան դպրոցի աշակերտներն ալ սիրայօժար յանձն առած էին սեղանի սպասարկութիւնը: Ատենապետուհի Տիկին Զուարթ Ղազարոսեանի հրաւերով Հայաստան այցելողները ոտքի կանգնեցան և ժողովուրդը ծափերով շնորհաւորեց զիրենք: Փոքրիկն Արտեմիս Կիւրճեան արտասանեց Սիլվա Կապուտիկեանի «Խօսք իմ Որդուն» բանաստեղծութիւնը և արժանացաւ բուռն ծափերու: Պր. Պետրոս Նորիկեան տուաւ իր ականատեսի ապաւորութիւնները Հայաստանէն, խօսելով անոր անտեսական վերելքին, գիտական հաստատութեան և հայկական հիւրասիրութեան մասին: Պր. Անդրանիկ Կիւրճեան, Պր. Նորիկեանի Հայաստան այցելող ընկերակիցը, պատմեց Ս. Էջմիածնի, Նոգեւոր Ընձարանի, հնութեանց թանգարանի, ինչպէս նաեւ ուսուցչական կազմին հետ իր ունեցած տեսակցութեանց մասին:

Օր. Անէթ Կիւրճեան արտասանեց Խ. Աբովեանի «Հայրենի հողը» որ արժանացաւ ներկաներու ցերմ ծափերուն:

Պր. Նշան Աստուրեան, որ իր տիկնոջ հետ այցելած էր Մերձաւոր Արեւելք, տուաւ իր ապաւորութիւնները Վենետիկի, Եգիպտոսի, Երուսաղէմի և Պէյրուէի հայ կեանքէն և Հ. Բ. Ը. Միութեան շրջանակներէն: Սոսեցաւ նաեւ Հայր Տօնիկեան, Վերուծելով Բարեգործական բառը և յեշտելով Բարեգործականի կատարած գործին կարեւորութիւնը: Ներկայացուեցաւ նաեւ զաւեշտ մը՝ «Մոռացկոս Տիկինը» որուն դերուսայն էր Արժ. Տէր Հայկ Քհնյ. Տօնիկեան: Դերանատարները յաջող կերպով ներկայացուցին իրենց դերերը և արժանացան ընդհանուրի գնահատութեան:

Լիբանան.—

Պէյրուք.— Յունուար 12ին, Կիրակի առաւօտ ժամը 10ին տեղի ունեցաւ հիմնարկէքի արարողութիւնը Հ. Բ. Ը. Միութեան Լեւոն Նազարեան վարժարանին, Միութեան Հ. Բ. Ընկերակցութեան Սինիլիի սեփական հողին վրայ, շնորհիւ Նազարեան գերզատանի 150,000 լիբանանեան ոսկիի իշխանական նուիրատուութեան: Հիմնարկէքի արարողութիւնը կատարեցին Հոգեշնորհ Տ. Գէորգ և Տ. Մամբրէ վարդապետները: Լեւոն Նազարեան վարժարանի հողը կը գրաւէ շուրջ 4500 քառ. մետր: Ան մեկուսացած է քաղաքէն և զերծ խճողման անպատեհութիւններէն: Երջապատուած է զովասուն և առողջարար պուրակներով: Բացումը հաւանաբար կատարուի Հոկտեմբեր ամսուան մէջ (1962):

— Միութեան Պէյրուէի դարձմանատունը 1961 երկրորդ վեցամսեային 4493 հիւանդ խնամած է, անոնց շատերուն հայթայթելով ձրի դեղորայք և ներարկումներ: 51 ուրիշ հիւանդներ խնամուած են և գործողութեան ենթարկուած Մախլուֆ հիւանդանոցին մէջ: Նոյն շրջանին դարձանատան ատամնարոյժը խնամած է 1415 ազգակիցներու սկսանքը, իսկ քաջած լեցուցած կամ մաքրած սկսանքուն թիւը կը հասնի 2378ի:

Հայկալ.— Հայկալի Մարգարեան Ընկերութեան կազմակերպած կրտսերներու յաշտակ պատքէթպոյի մրցաշարքը վերջացաւ 1961 Դեկտեմբեր 5ին: Յինալի մրցումը տեղի ունեցաւ Հ. Բ. Ը. Միութեան Հայ Կրթ. Ընկերակցութեան և Սերքըր Բաթոյիկ կրտսերներու միջեւ և հետքը քրոյարժ խաղէ մը ետք. 40 - 43 արագրուքով յաթոյնակր տարին Հ. Ե. Ը. արաքը և տիրացան Հայկալի Կրտսերաց Մրցաշարքին Ախոյեանութեան:

— Հ. Բ. Ը. Միութեան Հայ Կրթասարդաց ընկերակցութեան Հայ Համալսարանական Ուսանողաց Միութիւնը սարքած է դասախօսական երեկոյ մը նուիրուած Հայ Երաժշտութեան, որուն մասին խօսած է

լիբանանահայ երգահան խմբավար Պր. Համբարձում Պէրպէրեան: Թարգելի գասախօսը հանգամանօրէն խօսած է երեսուն գարեբու պատմութիւն ունեցող հայ երաժշտութեան շուրջ, որուն ուսումնասիրութիւնը գեռ չէ աւարտած և կը շարունակուի մեծ թափով մեր մայր Հայրենիքին մէջ: Հակառակ նիւթին մասնագիտական բնոյթին, յարգելի դասախօսը շատ պարզ ու հասկնալի ձեւով ներկայացուց իր քննարկութիւններն ու բացատրութիւնները: Ան բաժնեց հայկական երաժշտութիւնը չորս սեռերու՝ Վիպական, Եկեղեցական, Գուսանական, Ժողովրդական և անդրադարձաւ իւրաքանչիւրին, տալով անհրաժեշտ տեղեկութիւնները հասկնալի կերպով: Գնահատելի է Համալսարանական Ուսանողաց Միութեան այս ձեռնարկը, հայապահպանման ու հայ մտքի զարգացման բերած իր նպաստին համար:

Յարգանքի Երեկոյ՝ Գուրուած Պետրոս Աղամեանի.—

Հ.Բ.Ը.ի Մշակ. Կեդր. Յանձնախումբի կազմակերպութեամբ տեղի ունեցաւ յարգանքի երեկոյ մը, նուիրուած հայ բեմի հանձնարող զաւակ Պետրոս Աղամեանի մահուան 70 ամեակին, 23 Նոյեմբերի երեկոյեան, Կիւլպէնկեան հանդիսասրահին մէջ: Բացման խօսքով Պ. Սամուէլ Իլանճեան ամփոփ կերպով ներկայացուց Պետրոս Աղամեանը և հրաւիրեց ներկաները վայրկեան մը յարգել վերջերս մահացող Հրայեայ Ներսիսեանի յիշատակը: Ապա տեղի ունեցաւ Աղամեանի նամակներէն մէկուն ընթերցումը: Վ. Թերզեան արտասանեց «Դերասանը»:

Աղամեանի կեանքին մասին խօսեցաւ Օր. Աստղիկ Թայճեան, որ լուրջ պատրաստութեամբ տուաւ Աղամեանի կենսագրութիւնը, անոր կեանքին զանազան փուլերը, ցաւերը, յաջողութիւնները, փառքի օրերը և վերջապէս 41 տարեկանին պատահած մահուան մասին յուզիչ նկարագրութիւններ:

Ճշակաւոր տեքորով մը ներկայացուցան պատկերներ Օթելլօէն և Համլէթէն, տրուած ըլլալով որ Աղամեան Շէյքսպիրի գործերուն լաւագոյն մեկնաբանն էր: Բանախօսութեամբ մը հանդէս եկաւ Պր.

Պերճ Յաղլեան, Աղամեանի արուեստին զանազան գիծերուն շուրջ, մէջբերումներ ընելով արուեստի քննադատներուն կարծիքներէն՝ Աղամեանի խաղարկութեան և մարմնաւորած ախպարներուն շուրջ:

Պր. Սամուէլ Իլանճեան իր փակման խօսքին ընթացքին կարգաց Հայաստանի Արուեստի Ակադեմիայի անգամ Ռուբէն Զարեանի խօսքը նուիրուած անմահ Աղամեանի վառ յիշատակին:

ՅԱԼՈՍԱՍԱՆ-ԱՔԻՑԲ.—

Հ.Բ.Ը. Միութեան հովանաւորեալ «Արարատ» մշակութային և մարզական Միութիւնը, ընդառաջելով Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետին սրբատառ Կոնդակին, արժանավայել հանդէսով մը փառաւորեց Մաշտոցի ծննդեան 1600 ամեակը: Աթէնքի Պարնասոս սրահը լեցուած էր ծայր է ի ծայր հաւաքոյթը իրենց ներկայութեամբը պատուած էին Յունահայ հոգեւոր Պետերը: Հանդէսը զկտաւ ներդաշնակօրէն երգուած Հայրապետական Մաղթանքով: Օրուան նախագահ՝ Վահէ Աղասեան բացման իմաստալից ճառով մը վեր հանեց Տօնին նշանակութիւնը Ս. Մեսրոպ Մաշտոցի կատարած ազգային հոյակապ գործը: Առաջին բանախօսը, Հայր Նշան Վարդանեան, սահուն յունարէնով բացատրեց լեզուի դերը անհատին կեանքին մէջ, պատմականն բրաւ Ս. Մեսրոպի կեանքին և գործունէութեան, որուն շնորհիւ կարելի եղաւ օժտել հայ ժողովուրդը սերոյն լեզուով և գրականութեամբ:

Երկրորդ բանախօսը՝ Վեր. Գ. Տէմիրճեան ըսաւ թէ անմահն Մեսրոպի գիւտը ծնունդ տուաւ չորս հանգրուաններու. — ազատասիրութեան, հայրենասիրութեան, գրարսիրութեան և ազգապահպանումին, որոնց անդրադարձաւ հանգամանօրէն:

Վերջին խօսողը եղաւ Առաջնորդական Տեղապահ Մեսրոպ Աւագ Քահանայ Տէր Յակոբեան, որ հոգեշունչ ուղերձով մը պատմականն ըրաւ հայ գիրբու անմահ գիւտարտին և գործին, փառաբանելով մեր մշակոյթը յաւերժացնող գիրի մշակները բոլոր դարերուն:

Տեղի ունեցան արտասանութիւններ,

ինչպէս և նայկական նոր երգերու ունկընդրութիւն, զոր հրամցուց «Արարատ երգչախումբը, առաջնորդութեամբ Պր. Տիմիրէի Գալզանիսի: Հաւաքոյթը վերջ գտաւ Հելլէն Ազգային երգով:

Կիպրոս Նիկոսիա. —

Մեսրոպ Մասօցի Ծննդեան 1600 ամեակի սօճակասարուքիւն. —

— Նիկոսիոյ Փայլաս սինեմայի սրահին մէջ հանդիսաւորապէս տօնուեցաւ Ս. Մեսրոպ Մաչտոցի ծննդեան 1600 ամեակը: Հանդէսին իր հովանաւորութիւնը շնորհած էր Կիպրոսի Եօյն Համայնքային Տան Հայերու Ներկայացուցիչ Պերճ Թիլպեան, որ իր ներկայութեամբ այ պատուած էր վերոյիշեալ տօնակատարութիւնը: Ժամանակէն առաջ սրահը լեցուած էր Կիպրահայերով, ոմանք եկած Լառնադայէն և Ֆամապուսայէն:

Յայտագիրը բացուեցաւ Նմանեալ Մովսէսի շարականով և Հայրապետական Մաղթերգով, զորս երգեց Մ. Կ. Հաստատութեան երգչախումբը, ղեկավարութեամբ բազմափաստակ ուսուցիչ Պր. Վահան Պէտէլեանի: Պր. Արա Գալալճեան ընթերցումը բրաւ Վեհափառ Հայրապետի սրբատուն կոնդակին:

Մելիգոնեան Կրթական Հաստատութեան Տնօրէն Պր. Ս. Գալուստեան բացման խօսքը ընկելով անդրադարձաւ շատ ամփոփ կերպով մեր ժողովուրդի 3000 տարիներու պատմութեան, և ըսաւ թէ մեր իմացական զարթօնքի ոսկեդարը ունեցած էինք ճիշտ այն չրջանին, երբ մեր քաղաքական կեանքը կ'ապրէր իր ամենէն ճակատադրական օրերը:

Անթերի կատարողութեամբ և ապրումով Օր. Աննիկ Գալուստեան, — դաշնակի ընկերակցութեամբ շնորհաւի դաշնակահարուհի Օր. Գեղձին Կէպէնլեանի, — մենեբգեց Հ. Պէրպէրեանի — Լուսաւորչի Կանթեղր — որմէ վերջ Խաչիկ Թաչճեան յուզումով և հազորդական շուռնչով արտասանեց Սիամանթոյի Սուրբ Մեսրոպէն հատուած մը — Գիւսիս վառքը:

Երգչախումբին Կողմէ երգուած — Խօսք իմ Որդոյնըը — Հ. Պէրպէրեանի — և Ով Մեծասքանչը — գնահատանքի երկա-

ՈՂՋԵՐԹԻ ԵՐԵԿՈՅԹ Ի Պ ՏԻԻ ՊՐ. ՎԱՐԴԳԷՍ ԳԱՐՏԱՇԵԱՆԻ

Գահիրէի Հ.Բ.Ը. Միութեան Երիտասարդաց Մշակութային Մարմինը, 27 Ապրիլի Ուրբաթ երեկոյեան ողջերթի օշորակասեղան մը կազմակերպած էր ի պատիւ Պր. Վարդգէս Գարտաշեանի, որ ի մօտայ Լիբանան կը փոխադրուի պաշտօնով: Հաւաքոյթին ներկայ էին Գահիրէի Հ.Բ.Ը. Միութեան անդամները, «Տեղեկատու» խորտօնատէր Տիար Ալ. Սարուխան, Բանասէրպատմարան Տիար Արշակ Ալպոյաճեան եւն:

Հաւաքոյթին բացումը կատարեց Վարտաեւ ծափահարութիւններով ընդունուեցան հանդիսականներուն կողմէ:

Օրուան բանախօսը, Մելիգոնեան Կրթութարանի Հայ լեզուի ու գրականութեան դասախօս Պր. Ներսէս Թամամեան վերլուծեց Ս. Մեսրոպ Մաչտոցի էութեան երեք գլխաւոր յատկանիշները. — Մեսրոպ Հաւատացեալը, հանճարեղ և մանաւանդ Հայրենասէրը: Եզրակացնելով իր խօսքը, հմուտ բանախօսը ըսաւ թէ Սուրբ Էջմիածնի ներկայ Գահակալը Վազգէն Առաջին, Մեսրոպի հոգիով ու շուռնչով արժանի շարունակողն է Ս. Մաչտոցով սկսուած գործին, և իր անձն ու գործը մեր թոյրի գնահատանքին և մանաւանդ փաստութեան արժանի են:

Երիտասարդ ջութակահար Պր. Արա Որսկանեան, դաշնակի ընկերակցութեամբ Օր. Գ. Կիւլպէնկեանի, յարգողութեամբ և բարձր արուեստով նղապեց Գ. Հախիճեանի — Լէկէնտը և Գ. Ալէմչահի — Ողբերգն ու Հայկական Պարը:

Պր. Սաթակ Պալատունի հանկացողութեամբ և ապրումով արտասանեց Սարմէնի — Այց Մաչտոցի Գերեզմանին — քերթուածը:

Երգչախումբը երգեց ղեկավար Պր. Վահան Պէտէլեանի — Տաղ Սուրբ Մեսրոպայ երգը, և Տէր Կեցոմաղթեբրգով վերջ գտաւ տօնակատարութիւնը, որ խոր ապաւորութիւն մը թողուց ներկայ հասարակութեան վրայ:

չուժեան ատենապետ Տիար Հայկազուն Բիւրքճեան, որ ներկայացուց Տիար Գարտաշեանի տեղն ու դերը Գահիրէի Հայ Գաղութին մէջ, ինչպէս և Հ.Բ.Ը. Միութեան շրջանակէն ներս: գովեց անոր աշխատասիրութիւնը և նուիրումը մեր փայփայած իտէալին և գոհունակութիւնը յայտնեց որ ան կը մեկնի հոծ հայութեամբ գաղութ մը, ուր գործունէութեան լայն ապարէզ կը բացուի իր առջեւ:

Այս առթիւ գործադրուեցաւ գեղարուեստական կոկիկ յայտագիր մը: Այսպէս Օր. Լիւսի Սարգիսեան արտասունեց Սիլվա Կապուտիկեանի «Արարատեան Դաշտը» Օր. Սոնա Ճէճէեան՝ Վահան Թեքէեանի «Հաշուեյարդարը», Օր. Սրբուհի Ծաքարեան մեներգեց «Ա՛յ Վարդ», և «Հնձուորները», իսկ Պ. Պետրոս Գոգորեան ջութակի վրայ հրամցուց երկու հայրենական երգեր: Օրիորդ Լորա Կոկիկեան կարգաց Երիտասարդացի գործունէութեան սարեկան տեղեկագիրը և իր ընկեր-ընկերուհիներու անունով շնորհակալութիւն յայտնեց Պր. Գարտաշեանի որ իր պաշտօնավարութեանը շրջանին միշտ սիրով և անկեղծութեամբ մտեցած էր Երիտասարդութիւնը հետաքրքրող հարցերուն, ջանալով միշտ օգտակար ըլլալ ամէն կերպով: Այս առթիւ Պր. Գարտաշեանի յանձնուեցաւ փողկապի զարդասեղ մը, որպէս Երիտասարդացի յիշատակ:

Հետզհետէ խօսք առին Պր. Ալ. Սարուխան, որ վեր առաւ Տիար Գարտաշեանի գիւտանական գործունէութիւնը և կանոնաւորութիւնը: Պր. Սիսակ Ծայճեան, որ նախ մատնանչեց Տիար Գարտաշեանի Հայրենասիրութիւնը որ ուղղութիւն կուտայ

իր հանրային գործունէութեան և ապա ոգեկոչեց գործակցութեան լուսագոյն յիշատակները ի պատիւ օրուան հիւրին: ապա կարգաց Հաշուակալ Տիար Հրանդ Եկուեանի շատ յուզիչ հրատեղարի նամակը: Խօսք առաւ նաև Վարպետը՝ Տիար Արշակ Ալպոյանեան, որուն աշակերտը եղած է Գարտաշեան, և շեշտեց անոր բարեմանութիւնները և Հայ Մշակոյթին ծառայելու անշահախնդիր ոգին:

Վերջին խօսողը եղաւ Պր. Գարտաշեանի դպրոցական ընկերը՝ Տիար Հայկ Ժամկոչեան որ վեր առաւ անոր քաղաքացիական արի-ութիւնը և հասարակական գործիչի առաքինութիւնները: Պատասխանելով եղած բարեկամական սրտագին արտայայտութեանց, Տիար Գարտաշեան իր սրտաբուխ շնորհակալութիւնները յայտնեց բոլորին, ի մասնաւորի Երիտասարդացի բարեջան Վարչութեան, որ յարգելի գաղափարը ունեցած էր մեծարանքի այս ընդունելութիւնը կազմակերպելով և թելագրեց որ մեր գրոշին տակ համախմբուած սերունդը հաւատարիմ դրոշակիրը ըլլայ այն վեճ սկզբունքներուն որոնց ցատագովը հանդիսացած է Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութիւնը, իր անխտրական ոգիով, հայրենասիրական խանդավառութեամբ և հիւրընկալ երկիրներու հանդէպ հաւատարմութեամբ և քաղաքացիական պարտաճանաչութեամբ: Այս անմոռանալի հաւաքոյթի փակուեցաւ Տիար Ատենապետին ողջերթի խօսքերով: Եւ ներկաները ակամայ բաժնուեցան սրահէն, Բարեգործականի հաւատարիմ մէկ պաշտօնատարը մեծարած ըլլալու սրտի անհուն գոհունակութեամբ: Ա.Շ.

ԵԹՈՎՊԻՈՅ ԿԱՅՍԵՐ ՆՈՒԷՐԸ ՎԵՀԱՓԱՌ Վ ԱԶԳԷՆ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ

Եթովպիոյ Կայոբ Հայլէ Աեյասիէ իր ստորագրութեամբ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի նուէր զրկած է Աստուածաշունչի ամհարերէն թարգմանութեամբ նոր հրատարակութիւնը: Այս առթիւ Վեհափառ Հայրապետը, Նոյեմբեր 29 թուակիր օրհնութեան գիր մը զրկած է կայսեր, որուն մէջ կ'ըսէ.

«Քաղցր յուզումով ստացանք սուրբ բնձան՝ Աստուածաունչ Մատեանը ամհարական լեզուով, լոյս տեսած Ձեր բարձր համաճումով եւ հովանաւորութեամբ, զոր Մեր սեղանի վրայ պիտի պահենք միտ Մեր սրտի մօտիկ, իբրեւ խորհրդաճեան Ձեր ազնիւ գացումներուն դեպի մեր Սուրբ Աթոռը եւ սիրոյ յարաբերութեան մեր երկու փոյր եկեղեցիներու մեջ, որոնք երկար դարեր շարունակ Քրիստոսի յոյսը վառ են պահեր Արեւելիի ստեմաններուն վրայ. յանախ իրենց մարմնի նահապետութեան իսկ զինով:»

Մ Ե Ս Ր Ո Պ Մ Ա Հ Տ Ո Յ

(Հ Ա Յ Հ Ա Ն Ճ Ա Ր Ի Հ Ս Կ Ա Ն)

Ի՛նչպես երգեմ հիմա ես, փառեղ ի՛նչպես գովեցեմ,
Պատեամունքի խանդն ինչպես քեզի համար բորբոքեմ,
Լուսաւորողդ մեր էառսն, հայւսից արի դուն սիսան,
Դուն զբարութեան մեր աղունքն ու մեր հրգօր ապաստան:

Դարերն ահա դարերու ուսին կամար են կաւեր,
Անգրանկածինդ մեր փառքերն աստրիկից դար են չափեր,
Ու ալեհուն վերելէն, արամազդեայ քու տուփով,
Կը սաւառնիս դուն, Մեսրոպ, յաւերժակուն խոյանքով:

Քեզմէ ծընած են բոլոր մեր աստղերը բոցազլու,
Եզնիկ, Գորիւն, Եղիթէն, Խորենացին վեհ ու վեհ,
Խորախորհուրդ մեր Տանգէն, Շրնորհալին քաղցրածայն,
Առուղներու հոյր մեր, մեր Նահապետն ու Նովան:

Քեզմէ ծընած՝ նորագոյն մեր աստղերուն հոյր պերն,
Սիամանթօն, Վարուժան, Դուրեան, Կերեան, Մեծարեց.
Ուրիշ աստե որ եկան, վրկայեցին ու ահցան,
Սղան վրկայ քու փառքիդ եւ տուփիդ մեջ քաղուեցան:

Մենք անցաւոր, դուն անանց, դուն Ներկան ես յաւիտեան,
Կենդանութեան մենք նոյնիսկ սրբուն տուփեր ենք միայն,
Կեանքի ծովուն վրայ մենք փրփուր ենք լոկ յարաւարժ,
«Հայ դարերուն դիմաց՝ դուն ազամանդեայ ապառաժ»:

Ու քու անունդ է գրուած իւրաքանչիւր հայ եջին,
Իւրաքանչիւր հայ բառին, տառերուն մեջ իսկ չընչին.
Սեղաններէն ու բեմէն կը բաժարուիս ինչպես մաս,
Ու կը մընաս անբապառ, ու կը մեծնաս, կը ասնաս:

Ծագէ ի ծագ աշխարհին ամէն հայ սիրս ու հայ տուն,
Մասուն մըն է քու փառքիդ՝ գաղտնագրուած քու անունն,
Դուն ձրնողն Հայ Ողիին, դուն անոր մայրն ու դայեակ,
Դուն իր հրգօր ապաստանն, իր պահպանն ու պահակ:

Հ. Բ. Ը. ՄԻՈՒԹԵԱՆ ԷՈՒԹԻՒՆԸ

Հայկական Բարեգործական Ընդհ. Միութիւնը դարձեր է սփիւռքի կրթ-թական, մշակութային և բարեսիրական մարզերու մէջ ծառայող մեծագոյն կազմակերպութիւնը, ճշմարտապէս բարերար գերով և համապարփակ ծառայով: Անցեալ կէս դարու ընթացքին, հայ ժողովուրդը հարուածած ահաւոր աղէտներու ու դառն կարօտութեանց հանդէպ, Բարեգործական Միութիւնը եղաւ կարեկից հոգածութեան և սրտաբուխ նպաստի անխորհախ ապաւէն մը: Կեղքուած ու հալածական, յետոյ՝ տարագիր արեւմտահայութեան ճգնաժամային կարիքներէն և ցաւագին տառապանքէն ծնած՝ ան ընգառաջեց անոր ամէնէն ստիպողական պահանջներուն և վերափոխող պայմաններէն թելադրուած իր ձեւերուն ու նպատակներուն: Ան բաժնու գութան նուիրեց գաւառներու հայ չքաւոր գիւղացիին, խնամեց որբերը, օգնեց ալրիներուն ու թշուառներուն և դարմանեց հիւանդները: Եւ ան թուղթ ու մատիտ, գիրք ու դասարան ընծայեց մատաղ սերունդի հայեցի կրթութեան համար, յաճախ կաթի և հագուստի հետ: Հայաստանի ազատութեան փրկարար իրողութիւնը նոր անկիւնադարձ մը բացաւ հայոց ազգային վերականգնումի դաժան պայքարին մէջ, նոր և աւելի պայծառ խոստումներով, բայց նաեւ ծրագրելու, աշխատելու և զոհաբերուելու առաւել հեռահաս պահանջներով: Եւ Բարեգործականը եղաւ հայրենիքին մէջ տուն ու աւան կառուցանող, մշակութային ու նիւթական օժանդակութիւն մատուցանող և ներգող չի հանգանակութեանց հսկայ ձեռնարկները վարող կազմակերպութիւն: Ուղարբասուն ԱՆ ԻՐ ԼՆԻԿ ԱՆ ԴՐԷ ԱՍՏԱՆ

Հ. Բ. Ը. ՄԻՈՒԹԵԱՆ ՀՐԱՍՈՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ

"ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՀԱՅ ԳԱՂԹԱԿԱՆՈՒԹԵԱՆ"

Գ. Հ Ա Տ Ո Ր

1961 ի վերջերք, Գահիրէի մէջ, լոյս տեսաւ Հ. Բ. Ը. Միութեան նորագոյն հրատարակութիւնը. «Պատմութիւն Հայ Գաղթականութեան» Գ. Հասորը, որուն հեղինակն է բազմաթիւ բանասէր Պր. Աբօակ Ալպոյանեան: Այս գիրքը, որ կը բաղկանայ 507 էջերէ, արդիւնք է երկարատեւ պրպտութիւն անսպառ կորովի. ինչպէս իր նախորդները, եւ կարելի է յաւելում մը՝ Հայոց իրականացար պատմութեան վրայ:

Գիրքը հրատարակուեցաւ «Հ. Բ. Ը. Միութեան Կարապետ Ղազարոսեան Մշակութային Հիմնադրամ»-ով: Պր. Ղազարոսեան, Փրակտեկեանարեան մեր ազնիւ բարեկամն ու Միութեան Բարեբար Անդամը, այս հիմնադրամը հաստատած է Հայ գրականութեան եւ արուեստներու վաստակաւորները քաջալերելու նպատակով, Հ. Բ. Ը. Միութեան միջոցով: Յառաջիկային ուրիշ գործեր եւս պիտի հրատարակուին սոյն հիմնադրամին եկամուտով: Տեղին է աւելցնել, թէ Պր. Ղազարոսեան մեկեանսը հանդիսացաւ իր ծննդավայրին նուիրուած մեծածաւալ պատմագրքին, «Խաբբերդ եւ անոր ոսկեղէն դասը», երկասիրուած Պր. Վահէ Հայկին կողմէ:

Ալպոյանեանի ներկայ աշխատութիւնը կը բովանդակէ հայ գաղթականութեան նոր օրջանը, այսինքն՝ 1453 մինչեւ 1900 թուականը, մասնաւորապէս Ասիոյ եւ Ծայրագոյն Արեւելի գաղութներուն պատմութիւնը: Այս թիով անկէ կուտան հասուած մը, «Անընդհան Գաղթ» խորագրին տակ (էջ 116-118), ուր պատկերացուած կը գտնենք հայ կեանքի մեծագոյն անեծքին՝ արագազարթին նիւթաւորումները, անցեալ հինգ դարերու ընթացքին:

Մ. ԽՈՐԱ

Հայ ժողովուրդը սիրած է խաղաղու-

թեան, անդորրութեան, և ապահովութեան մէջ քրտնաջան աշխատանքը անտրտունջ:

Գծբախտաբար իր բնավայրին աշխարհագրական դիրքը պատճառ եղած է որ իր պատմութեան բովանդակ ընթացքին օկսեալ նախ քան Քրիստոս Չ. դարէն — ուր Արմենական վերնախաւը Հայաստան կը մտնէր — մինչեւ Ի. դարուն սկիզբը, և անկէ ալ ետքը մինչեւ այսօր, այս խաղաղասէր ժողովուրդը հանգիստ չէ գտած իր Մայր—Հայրենիքին մէջ: Այս պատճառով մաս մը Հայ անհատներ իրենց բնաշխարհէն հեռանալու հետամուտ եղած են:

Այնպէս որ, նստակեաց և շինարար այս ժողովուրդը, հակառակ իր հայրենիքին նկատմամբ ջերմ սէր տանելուն, միշտ ունեցած է պարագային համաձայն առաւել կամ նուազ թիւով անձեր, որոնք ամենահին ժամանակներէ սկսեալ լքելով իրենց հայրենիքը՝ գացած են մօտաւոր կամ հեռաւոր երկիրներ, հետզհետէ աճող թիւերով:

Ասկէ զատ, պէտք է նկատի ունենալ թէ Հայերը իրենց մշակոյթով տարածականութիւն ունեցող ժողովուրդ մը եղած են և ինչպէս իրենց բնագաւառին մէջ, իրենցմէ առաջ հոն բնակող ժողովուրդները և զանազան գաւառներուն մէջ իրենց սեփական ցեղային նկարագիրը պահող զանգուածները քաղաքակրթութեան նուաճումի ենթարկած են շնորհիւ իրենց կենսունակութեան և զանոնք հայացուցած են:

Շնորհիւ այս տարածականութեան՝ Հայերը երկրին ծայրագաւառներուն խոռն բնակչութիւնը լիովին հայացնելէ ետք, Հայաստանի աշխարհագրական օտմաններէն դուրս և անմիջական դրացի հողերը ևւս, ինչպէս բացատրուած է (Պատմ. Հայ Գաղթականութեան, Ա. հատոր, էջ 130-132 և Պատմական Հայաստանի Առհմանները, էջ 12-20), հայացուցած են, այնպէս որ օտարներու կողմէ այդ շրջաններն ալ Հայաստան նկատուած են:

Բայց ամէն առեւ Հայերը բարեյաջող պայմաններու մէջ չեն ապրած՝ այս մշակութային նուաճման մեծ աշխատանքը կատարելու համար և եղած են ժամանակներ, որ հակադարձէն Հայերէն մասեր կորսուած են ապագայնոցմամբ:

Մասնաւորապէս ԺԱ. դարէն ետքը,

ինչպէս տնօնակցաւ (տես. Պատմութիւն Հայ Գաղթականութեան Բ. հտ.), կեդրոնական Ասիոյ տափաստաններէն դէպի Արեւմուտք շարժող վաչկատուն ժողովուրդներու իրարու յաջորդող արշաւները, որոնք կը փճացնէին Արեւելքի քաղաքակրթութիւնը, Հայաստանի մէջ և շուրջը ստեղծեցին վիճակ մը, որուն հետեւանքով Հայ խումբեր պարտաւորութեան խուճապահարփախչիլ բարբարոս արշաւողներու առջեւէն և Հայաստանէն դուրս, դրացի և նոյն իսկ հեռաւոր երկիրներ ապաստանիլ, ամէն բանէ առաջ իրենց ֆիզիքական գոյութիւնը ապահովելով:

Այնպէս որ՝ նոր Գարերու սկիզբը, որ կարելի է Կ. Պոլսի Յատիկ Սուլթան Մուհամմէտէն գրաւուելէն (1453) կամ Քրիստոսի Բոլոմպոսի Ամբրիկա օտք ղնելու (1492) թուականներէն հաշուել, Հայերը իրենց պատմական Մայր Հայրենիքի սահմաններէն դուրս՝ շրջակայ գրացի երկիրներու մէջ բաւական ստուար թիւով հաստատուելէ զատ, ամէն ուղղութեամբ տարածուած էին, այն ժամանակի ծանօթ աշխարհին ամէն ժամերը:

Արդարեւ, այդ ժամանակներուն Հայեր կը բնակէին, իրենց երկրին արեւելեան սահմաններէն սկսեալ, դէպի Արեւելք, դէպի Խաղաղական Ովկիանոս, և դէպի հարաւ-արեւելք, դէպի Հնդկաց Ովկիանոս տարածուող ընդարձակ երկիրներուն մէջ. Հայաստանի սահմաններուն մօտ ստուար և Խաղաղականի փերուէն և Հնդկաց Ովկիանոսի ուղղութեամբ, ցրուած և շատ ցանցաւ թիւերով:

Ինչպէս Հայաստանի արեւելեան կողմը, նոյնպէս նաեւ հիւսիս. կողմը, մինչեւ կովկասեան լեռներու ստորոտը, շատ մեծ թիւով հայեր հաստատուած էին և կարեւոր դեր մը կը կատարէին այդ շրջանակին մէջ՝ կերպով մը հայացնելով այդ դրացի երկիրներէ՝ ուր շատ մեծ թիւով կը բնակէին: Վրաստան լեցուն էր հայերով, որոնք կովկասեան լեռներէն ալ անցնելով, տարածուած էին այդ լեռներուն հիւսիսային կողմը տարածուող անձայրածիր տափաստաններուն մէջ հիմնուած կարեւոր քաղաքներու մէջ, յատկապէս Վոլկայի և Տնիբերի հովիտներուն մէջ, ինչպէս նաեւ Տաւրիա, Ղրիմ, Կար-

միր Ռուսիա, Ուկրաինա, Լեհաստան, Բոսնիա, Թրանսիլվանիա, Հունգարիա, Խորուսթիա, Խառնակելով ուրիշ հայ գաղթականներու, որոնք Պալատնեան թերակղզիի ճամբով հոն տեղերը եկած էին:

Դէպի հիւսիս գաղթող հայերէն պղտիկ հատուածներ մինչեւ Պալթիկ և Սպիտակ Մովերը պիտի հասնէին և այդ ընդարձակ տարածութեան վրայ պիտի տարածուէին:

Իսկ Հայաստանի արեւմտեան սահմանը ճշդոյ Եփրատի արեւմտեան կողմը տարածուող երկիրները, յատկապէս Փոքր Հայք, Կապադովկիա, Կիլիկիա և ամբողջ Փոքր Ասիա, մինչեւ Բիւթանիա և Կ. Պոլիս ու նոյն իսկ Պալատնեան Թերակղզիին՝ մինչեւ Դանուբ և աւելի անդին: մինչեւ Եւրոպայի սիրար և մինչեւ Գերմանիա, Պրանսա, Անգլիա և հարաւային Եւրոպայի մէջ Իտալիա, Սպանիա և Փորթուկալ Հայ գաղութներ ընդունած են աւելի կամ նուազ թիւերով, մինչեւ Նոր ժամանակներու սկիզբը: Այս Արեւմտեան գաղութներուն կարելի է միացնել նաեւ Հայաստանի հարաւակողմը, Եփրատի և Տիգրիսի ոռոգած արգաւանդ դաշտերը, հիւսիսային և հարաւային Միջագետքը, որուն հիւսիսային Ուսահայաստան՝ իր Հայ ստուար բնակչութեան պատճառով հայկական երկիր համարուած է, ինչպէս նաեւ դրացի Սուրիան, Պաղեստինը և նոյնիսկ Սուէզի պարանոզէն ասդին Նեղոսի արգասաբեր հովիտը՝ ընդունած էին Հայ գաղութներ: (Տե՛ս՝ Եգիպտոսի Գաղութի Պատմութիւնը, Ա. Այպոյաճեանի, հրատ. Հ. Ա. Զ. Ի, 1960, Գրահիրէ):

Այս երկիրներէն ոմանք կը ներկայացնէին հրապուրիչ և առինքնող միջավայրեր հայերու համար, որոնք այդ տեղերը հաստատուած էին:

Բոլոր այս գաղութները, որոնք ցրուած էին ծանօթ աշխարհին մէջ, քաղաքական վիճակին համաձայն ունեցած են բարգաւաճման և որոշ զարգացման, ինչպէս նաեւ քաղաքական ղեկավարութեամբ ձախող դասակարման հետեւանքով, երբեմն ալ ունեցած են իրենց անկման և անշքացման շրջանները:

Այդ գաղութներէն ոմանք հիւժած և սպառած են իրենց հաստատուած վայրերուն մէջ նպաստուոր գետին չգտնելով իրենց

զարգացման համար: Այսպէս, ունեցած ենք Միջին Դարու վախճանին Հայ գաղութներ որոնք որոշ շրջանէ մը ետք անհետացած են և գոյութենէ զ դրած:

Նոր Դարերու սկիզբը, Հին և Միջին Դարերու տեւողութեան՝ Հայաստանէն դէպի արեւմուտք, Փոքր Հայք, Փոքր Ասիա, Կիլիկիա, Կիպրոս, և մանաւանդ Կ. Պոլիս և Պալատնեան գաղթող Հայերով յեցուած էին և Միջերկրականեան երկիրները կը հիւրընկալէին փոքրիկ Հայ գաղութներ որոնք կենսունակ վիճակ մը ունեցած էին և անտեսական բարթութեան կը ձգտէին և յաջողութիւններ ցոյց կուտային:

Միջին Դարու վախճանէն մինչեւ Ի. Դարու սկիզբը (1453 կամ 1492 - 1900) չորս ու կէս դարու ընթացքին Հայ ազգին կեանքը որեւէ բարեփոխում չէ ունեցած գրեթէ, և թերեւս աւելի դժբախտութիւններով լի եղած է և գարձեայ Հայերը իրենց Մայր Հայրենիքէն հեռացած են, աւելի մեծ զանդուածներով, երբեմն բռնի և երբեմն ալ կամաւոր, ճիշդ այն պատճառներով, որոնցմով կը հեռանային նախորդ շրջաններուն, մասնաւորապէս Միջին Դարուն:

ԱՐՇԱԿ ԱԼՊՅԱՆԻ

«ՄԵՆՔ ՄԵՐ ԱԿՆՈՅՈՎ»

Ա. ՍԱՐՈՒԽՅԱՆԻ

Մեր ամբողջ կեանքը՝

220 երգիծանկարներով:

Էջ 262, Գին 250 Ե.Գ. Դիմել հեղինակին

4, Սերափիս փողոց, Հելիոպոլիս կամ՝ Հայ Ազգային Հիմնադրամի գրասենեակը՝ 3, Տուպրե փողոց, Գսիլուէ Աղեքսանդրիա՝ Պր. Տիգրան Ոսկեանի, 9, Սթամպուլ փողոց:

ՕՇԱԿԱՆԻ ՍՈՒՐԲԸ

(Մանրագիր 1600 ամեակից առօրե)

Ս.

Նիւթսպաշուսթեան այս դարուն և սփիւռքանայութեան պարտագրուած գը-
 փրնդակ պայմաններուն ու հոգեկան մը-
 ուայլին մէջ ի՛նչ բան աւելի ոգեւորիչ ու
 փրկարար որքան ոգեկոչումը մեր ազգա-
 յին սուրբերուն ու հերոսներուն, գաղափա-
 րական մեր տիտաններուն, մեր ցեղային
 դիմագիծը կերպագրող երախտաշատ անձ-
 նաւորութիւններուն: Ու ո՞րը անոնցմէ՝
 որուն յիշատակը կարենար փոխանցել մե-
 զի այնքան եռանդ ու խրախոյս, մեր կը-
 թոտ քայլերուն տակ նոր թափ ու աւելն՝
 նրջան Ոչականի մեծ Վարդապետ:

Փառասիրութիւնը չէր խթանը իր
 տքնութիւններուն, ո՛չ ալ ցուցամոլու-
 թիւնը՝ թափ ու թռիչք տուող իր մտա-
 ծումներուն: Այլ երկնաւոր ու յաւիտենա-
 կան ճշմարտութիւնները իր ժողովուրդի
 լայն խաւերուն մտաչելի դարձնելու սըր-
 բազան իղձը, իր ցեղը օտար ու կլանիչ
 ազդեցութիւններէ ընդմիջտ ազատագրե-
 լու, անոր ձեռքը գոյատեւման բարոյա-
 կան զէնք մը տալու վսեմ իտէալը, մշա-
 կութային դեմնի վրայ մեծ ու առաջա-
 ւոր ազգերու կողքին անոր տեղ մը ապա-
 հովելու արդար մտահոգութիւնը:

Ան գիտէր թէ ինչ եղած էր քաղաքա-
 կան գեանի վրայ փայլուն նուաճումներ
 արձանագրած ու կործանած գահերու հի-
 մերուն վրայ իրենց կայսերական զրօշնե-
 րը կոթողած ազգերու ճակատագիրը: Ի-
 րենց թիւին ու բիրտ ոյժին իրենց բա-
 նակներուն ու այրուածիին վրայ իրենց
 վստահութիւնը ամբողջովին կեղբոնացու-
 ցած մեծագոր պետութիւններու վախճանը:

Ու դիտէր միւս կողմէն, անբուարա-
 րութիւնը օտար լեզուներով Սուրբ Գիրքի
 զանգուածներուն ընկալչութեան մատու-
 ցումին:

Ուրե՞նք Ամէն գնով պէտք էր գտնել
 այրուբէն մը այս ժողովուրդին համար, ու
 տնով թարգմանել Աստուածաշունչն ու կը-
 րօնական և մշակութային որոշ արժէքով
 այլ մատաններ մեր բարբառին:

Ու հայ ժողովուրդի այս համեստ զա-

ւակը, կրօնաւորի պատմուճանը առած իր
 ուսերուն, պիտի ափ առնէր Արեւելքի մեծ
 ոստաններու դռները, անընկճելի հաւատա-
 քով մը գտեպիհը:

Պիտի չընկրկէր Մեսրոպ հայերէն տա-
 ւերը գտնելու իր մէկ երկու անյաջող
 փորձերէն ետք իսկ: Յուսահատութիւնը
 պիտի չյաջողէր ջլտաել անոր եռանդն ու
 լուսաւոր հաւատքը հոնդէպ իր գաղափա-
 րին իրաւութեան ու յաղթանակին:

Ու երբ մարդկային ամէն միջոցները
 եկան անբաւարար մարմին տալու իր օսկի
 երազին, ան, աղօթքի զօրութեան ապաւի-
 նած, պիտի բաղխէր դռները երկնքին, հայ-
 ցելու համար իր ուղածը անկէ՝ ՁՈՐ
 յաջողէ զամենայն գործս բարիս:» Չէ՞ որ
 բարի էր նպատակը ու իր բովանդակ յոյ-
 սը դրած էր նախախնամութեան վրայ՝ որ
 ամենակարող էր ու ամենապարզել:

Ու պիտի գար միջամտութիւնը հրաշ-
 քին, իր լրումին հասցնելու յղացուած
 այս գեղեցիկ գործը: Ու պիտի դրասան-
 գուէր ճակատը Տարօնցի համեստ վարդա-
 պետին, լուսապսակովը սուրբերու: Ու
 պիտի խօսէր Աստուած մեր ժողովուրդին
 մե՛ր իսկ լեզուովը, մե՛ր իսկ տառերովը:
 Կարճ ատենէն պիտի թարգմանուէր Գիրքե-
 րու Գիրքը: Պանդի ու ստեղծումի անօրի-
 նակ ու յորդահոս ալիք մը պիտի ողողէր
 մեր աշխարհը արեւավառ, անոր զաւակնե-
 րուն սրտերը լուսաբաղձ ու մտքերը ճըշ-
 մարտախոյզ: Ուսուցմանն իրիտասարդ-
 ներու հոյ մը պիտի դիմէր գիտութեան
 ու մշակոյթի մեծ կեղբոններուն, վերա-
 դարձին իրենց մտքի լոյսովը լիազնելու
 լուսածարու հոգիները մեր ազնուական-
 ներուն ու շինականներուն, մեր ժողո-
 վուրդի բոլոր խաւերուն:

Ու պիտի վերադառնար Մեսրոպ հայ-
 բնիք, ձոցը՝ ակնկառոյց սպասող՝ իր ժո-
 ղովուրդին: Պիտի վերադառնար, սիրտը
 զեղուն երանութեամբ մը անսպառ, իրենց
 իտէալը նուաճած մարդերուն յատուկ գե-
 րազանց գոճուականութեամբ մը յորդուն:
 Ու պիտի տեսնէր տեսանողի իր աչքերով
 բարիքը, արգասիքը իր յաղթանակին,
 անոր սարածուիլը մութ ու երկար դարե-
 րու հասակն ի վար, հրաշածին այդ յաղ-
 թանակին հրաշալի դերը մեր պատմու-

Թեան արիւնոտ ծփանքներուն զիմաց: Ու վերջապէս պիտի վերադառնար Հայաստան իբրեւ նոր Մովսէս. «Ինքեւ զգիր օրինաց ի Հայաստան աշխարհի», ինչպէս այնքան իրաւամբ կ'ըսէ սրբազան շարակա- նագիրը:

Ահա սեղմ գիծերու մէջ. մեծութիւնը Մեորոպի գործին, ու անոր կենսական դերն ու կարեւորութիւնը մեր արիւնաներկ պատմութեան մէջ:

«Ս.»

ԳԷՈՐԳ ԶԻՆԻՎԻԶԵԱՆ

Գահիրէի ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐԵԳ ԸՆԴՀ. ՄԻՈՒԹԵԱՆ օրկան

«Տեղեկատու» ն կը հրատարակուի ամիսը անգամ մը.

- Թղթակցութեանց, դրամական նուէրներու, գիրքերու, թերթերու և հանդէսներու առաքումները կատարել խմբագրութեանս հասցէին՝

Խմբագրութիւն «Տեղեկատու»ի

15, Էմատ էլ Տին փողոց

Նամակատուի 717, Գահիրէ — Հեռախօս 55636

Rédaction «Déghégaou»

15, Rue Emad El Dine

B.P. 717, — Le Caire — R. A. U.

Այս հրատարակութիւնը վճարովի չէ
Շնորհակալութեամբ կ'ընդունինք նուէրներ, մեր այս
ձեռնարկը աւելի ճոյս եւ օգնական բնօձայնու համար:
— Անանալու համար դիմել խմբագրութեանս —

مطبعة ساهاج مسروب ٢٥ شارع عرابي بالقاهرة

Printed in Egypt by SAHAG-MESROB PRESS, 25 Sharia Oraby, Cairo, U.A.R.